# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

***ք. Երևան***

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2022թ. նոյեմբերի 3-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

<u>Նիստին մասնակցում էին՝</u>

<u>Կոմիտեի անդամներ</u>

| | |
|---|---|
| Կարեն Հովհաննիսյան | Կոմիտեի նախագահ |
| Ռուբեն Սինոյան | Կոմիտեի փոխնախագահ |
| Բաբկեն Ղալոյան | Կոմիտեի անդամ |
| Տիգրան Իսրաելյան | Կոմիտեի անդամ |
| Արման Ալաբերքյան | Կոմիտեի անդամ |
| Վահան Բերակչյան | Կոմիտեի անդամ |
| Հայկուհի Ռշտունի | Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար |

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 7-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **24.10.2022թ-ի թիվ N 01/10 որոշմամբ հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում Կոմիտեն լսեց Նիստին հրավիրված ՀՖՖ ՏՏ ռազմավարության փորձագետին:**

2. **30.10.2022թ-ի «Ալաշկերտ»-«ԲԿՄԱ» (ՊԼ-066) խաղի ժամանակահատվածում «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Բլադիմիր Դիազ Սաավեդրայի (44444) անվայել վարքագծի վերաբերյալ;**

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Բլադիմիր Դիազ Սաավեդրայի (44444) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Բլադիմիր Դիազ Սաավեդրային (44444) որակազրկել 2 խաղով և «Ալաշկերտ ֆուտբոլային ակումբ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։

3. **29.10.2022թ-ի «Լ. Արցախ»-«Ուարտու» (ՊԼ-067) խաղի ժամանակահատվածում «Լ. Արցախ» թիմի պաշտոնյա Արմո Արտաշեսի Ադամյանի (12360) և «Ուրարտու» թիմի ֆուտբոլիստ Կարեն Արթուրի Մելքոնյանի (13399) կողմից կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ։**

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հիմք ընդունելով Կանոնակարգի 12-րդ հոդվածի 12.01-րդ կետը հարուցել թիվ 01/11 կարգապահական վարույթը և ձեռնարկել դրանից բխող անհրաժեշտ գործողություններ։

4. **31.10.2022թ-ի «Վեստ Արմենիա-2-11»-«Լեռնային Արցախ-11» (12Մ7-009) խաղի չկայանալու վերաբերյալ։**

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «Վեստ Արմենիա-2-11» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 20-րդ կետը՝ «ՖԱ Վեստ Արմենիա» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով։

5. **30.10.2022թ-ի «Վանաձոր-06»-«Օնոր-05» (18Բ018) խաղի ժամանակահատվածում «Օնոր-05» թիմի կողմից խաղադաշտն ինքնակամ լքելու, և խաղը չշարունակվելու վերաբերյալ։**

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «Օնոր-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 10-րդ կետը՝ «Օնոր-05» թիմիո

գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով և «Օնոր» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

6. **31.10.2022թ-ի «Վեստ Արմենիա»-«Լեռնային Արցախ-2» (ԱԽ-080) խաղն ուշացումով սկսելու վերաբերյալ:**

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «Լեռնային Արցախ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 41-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

7. **31.10.2022թ-ի «Վեստ Արմենիա-1-11»-«Սիսիան 12» (12Մ7-008) խաղի չկայանալու վերաբերյալ:**

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «Վեստ Արմենիա-1-11» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 20-րդ կետը՝ «ՖԱ Վեստ Արմենիա» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

8. **29.10.2022թ-ի «Էկովիլ ֆզ»-«Եղվարդ ֆզ» (ՖԶԲԽ-011) խաղի նախախաղային խորհրդակցությանը «Էկովիլ ֆզ» ներկայացուցչի չմասնակցելու վերաբերյալ:**

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «Էկովիլ ֆզ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 48-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Էկովիլ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

9. **01.10.2022թ-ի «Էրեբունի-09»-«Ակադեմիա-1-10» (14Ա-008) խաղի ժամանակահատվածում «Էրեբունի-09» թիմի ֆուտբոլիստ Հայկ Արայիկի Մանգասարովի (34820) և «Ակադեմիա-1-10» թիմի ֆուտբոլիստ Գրիգ Վլադիմիրի Մխիթարյանի (35116) կողմից հարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ:**

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

1) Հաստատված համարել «Էրեբունի-09» թիմի ֆուտբոլիստ Հայկ Արայիկի Մանգասարովի (34820) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք

ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Էրեբունի-09» թիմի ֆուտբոլիստ Հայկ Արայիկի Մանգասարովին (34820) որակազրկել 2 խաղով և Համայակ Խաչատրյանի անվ. մանկապատանեկան համալիր մարզադպրոց. h11 հիմնարկին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով։

2) Հաստատված համարել «Ակադեմիա-1-10» թիմի ֆուտբոլիստ Գրիգ Վլադիմիրի Մխիթարյանի (35116) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Ակադեմիա-1-10» թիմի ֆուտբոլիստ Գրիգ Վլադիմիրի Մխիթարյանին (35116) որակազրկել 2 խաղով և ՀՖՖ «Տեխնիկական կենտրոն-Ակադեմիա» ՓԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով։

**10. 31.10.2022թ-ի «Փյունիկ-3-14»-«Միկա-14» (8Մ1-011) խաղի ժամանակահատվածում դաշտի տեր թիմի կողմից մարզադաշտում կարգ ու կանոնը չապահովելու վերաբերյալ։**

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «Փյունիկ-3-14» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգաապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով։